ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հետևաբար, Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվոր կողմը նախապես վճարել է սահմանված պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 360-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը՝

ՎՃՌԵՑ

1. <<Լեմուր Թրեյդ>> ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2022-ՃՈ/ՌԵՏ/Ա-110-1 ծածկագրով գնման ընթացակարգով պայմանագիրը լուծելու մասին որոշումը և/կամ ծանուցումը վերացնելու/անվավեր ճանաչելու և որպես հետևանք մատակարարված ապրանքներն ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ